*Հավելված*
*Հաշվեքննիչ պալատի*
*2024թ.հոկտեմբերի 31-ի թիվ 113-Ա որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ .................... 5
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .................... 7
III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ .................... 8
IV. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .................... 10
V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ .................... 24
VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .................... 27

# ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը**[1] | Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշում: |
| **Հաշվեքննության օբյեկտը** | Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն: |
| **Հաշվեքննության առարկան** | Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| **Հաշվեքննության առարկայի չափանիշները** | 1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,<br>2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,<br>3. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք,<br>4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք,<br>5.«Գնումների մասին» ՀՀ օրենք,<br>6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,<br>7.«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,<br>8. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք,<br>9. ՀՀ կառավարության մայիսի 2017 թվականի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում: |

[1] «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

| | |
|---|---|
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2024 թվականի հունվարի 1–ից մինչև 2024 թվականի հունիսի 30–ը: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2024 թվականի օգոստոսի 1-ից 2024 թվականի հոկտեմբերի 31-ը: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը**[2] | Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների ու տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: |
| **Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը: |

[2] «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

# I.ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննությամբ արձանագրված էական փաստերն են.

- ՀՀ ներքին գործերի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ կողմից «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ին հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 1,170,000.00 հազ. դրամ դրամաշնոհ: Հատկացումներն այդ նպատակով նախատեսված «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն դասակարգվել (պլանավորվել), վճարվել և հաշվետվություններում արտացոլվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվետվության բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման վերը նշված հոդվածների 1,170,000.00 հազ. դրամի չափով խեղաթյուրման:

- Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով օգտագործված հեղուկ վառելիքի համար ծախսվել է 919,561.87 հազ. դրամ: Հեղուկ վառելիքի ծախսը հիմնավորված է ճանաչվում տրանսպորտային միջոցների շահագործված լինելու հանգամանքը հավաստող երթուղային թերթիկների առկայության պարագայում, մինչդեռ՝ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում նշված ծախսը հիմնավորող երթուղային թերթիկներ չեն լրացվել (բացառությամբ Երևան քաղաքի պարեկային ծառայության ղեկավար կազմին ամրակցված 15 տրանսպորտային միջոցների):

Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը 2024 թվականի վեց ամիսների հաշվետվություններում ավել է ցույց տրված 54,039 լիտրով, որը հանգեցրել է նույն ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվության փաստացի ծախսերի ցուցանիշի խեղաթյուրման՝ 26,478.57 հազ. դրամ գումարի չափով: Հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների տվյալ ցուցանիշի խեղաթյուրումը օրենսդրության համաձայն ազդեցություն չի կարող ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա[3]:

---

[3] Հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրումները ներառված են ընթացիկ եզրակացությունների «Խեղաթյուրումներ» բաժնի «Խեղաթյուրումներ, որոնք չունեն ազդեցություն Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա» ենթաբաժնում, քանի որ դրանք օրենսդրության համաձայն ազդեցություն չեն կարող ունենալ Հաշվեքննիչ

- Ոստիկանության զորքերի կարիքների համար ուղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 68,680.00 հազ. դրամ: Հատկացումներն այդ նպատակով նախատեսված «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն դասակարգվել (պլանավորվել), վճարվել և հաշվետվություններում արտացոլվել են «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվետվության բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման վերը նշված հոդվածների 68,680.00 հազ. դրամի չափով խեղաթյուրման:

---

պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (27-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ: «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:

# II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ[4]

Հաշվեքննության իրականացման համար Նախարարությունից ստացվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունները ներկայացված են IV- րդ բաժնում, իսկ խեղաթյուրումները՝ V-րդ բաժնում՝ 1,276,222.07 հազ.դրամ գումարի չափով, որից 1,249,743.50 հազ.դրամը Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվետվությունների պատրաստման և ներկայացման տեսանկյունից էական է, բայց ոչ համատարած:

Հետհսկողական գործընթացի շրջանակում Նախարարության կողմից Հաշվեքննիչ պալատին է ներկայացվել «Նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ միջոցառումների ծրագիր» և «Անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն»: Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել է հինգ առաջարկություն, որից երկուսի կատարման ժամկետը Նախարարության կողմից նշվել է մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսը: Մյուս երեքի մասով ներկայացվել է, որ դրանք կրում են շարունակական բնույթ:

Նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության ընթացիկ եզրակացության 22 կետերով արձանագրված անհամապատասխանություններից Նախարարության կողմից հետհսկողական գործընթացով տեղեկատվություն է ներկայացվել 16-ի մասով: Մանրամասները ներկայացված են Հավելված 1-ում:

[4] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

## III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարությանը, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է 44,830,897.00 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 45,595,006.04 հազար դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 41,600,727.96 հազար դրամ, փաստացի ծախսը՝ 43,447,678.02 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 91.2 %:

Ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1, Հազ.դրամ

| Ծրագիր | | Հաշվետու ժամանակահատվածի պլան | Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան | Փաստ | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 44,830,897.00 | 45,595,006.04 | 41,600,727.96 | 43,447,678.02 |
| 1045 | Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն | 49,132.70 | 49,132.70 | 49,132.70 | 49,132.70 |
| 1070 | Աջակցություն փախստականների ինտեգրմանը | - | - | - | 209,573.12 |
| 1090 | Փրկարարական ծառայություններ | 6,547,028.70 | 6,547,028.71 | 5,844,484.15 | 5,768,374.64 |
| 1101 | ՆԳՆ կրթական ծառայություններ | 785,830.00 | 785,830.00 | - | - |
| 1110 | Այլընտրանքային աշխատանքային ծառայություն | 360.00 | 360.00 | 360.00 | 360.00 |
| 1111 | Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր | 19,469.00 | 19,469.00 | 19,469.00 | 19,469.00 |
| 1234 | Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, | 37,429,076.60 | 38,193,185.63 | 35,687,282.11 | 37,400,768.56 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն | | | | |

**Նախարարության կողմից վերահսկվող մուտքեր (եկամուտներ)**

Նախարարության կողմից 2024 թվականի առաջին կիսամյակին գանձված պետական տուրքի  և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողականի մասին հաշվետվության  համաձայն՝ ծրագրային ցուցանիշը պլանավորվել է 17,133,357.90 հազ. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերի ցուցանիշը կազմել է 17,429,972.47 հազ. դրամ, որը գերազանցում է ծրագրային ցուցանիշը 296,614.57 հազ. դրամով կամ 1.73 տոկոսով: Վերահսկվող մուտքերի հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի ցուցանիշները ներկայացվում են Հավելված 2-ում:

# IV. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *4.1. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման շրջանակներում «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր*

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվող ընթացիկ դրամաշնորհների գծով ծախսերի դասակարգման համար նախատեսված է «463700 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:***

Նախարարության և «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2024 թվականի հունվարի 11-ին կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիրը՝ գումարով 3,210,000.00 հազ. դրամ: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 1,170,000.00 հազ. դրամ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «463700 Ընթացիկ դրամաշնորհներ

պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի փոխարեն:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն: Կկատարվի հոդվածային վերաբաշխում:

### *4.2. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման շրջանակներում «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր*

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի համար նախատեսված է «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:***

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2023/2025» ծածկագրով գնման պայմանագիրը, գումարով՝ 219,000.00 հազ.դրամ: Պայմանագրով նախատեսվել և փաստացի ձեռք են բերվել տարբեր սարքերի և սարքավորումների նորոգման ու պահպանման ծառայություններ:

Վերոնշյալ գումարը հատկացվել է «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածի փոխարեն:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն: 2025թ. համար կկատարվի հոդվածային վերաբաշխում:

### *4.3. 1234-11009 Հասարակական կարգի պահպանություն 421600 «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր*

4.3.1. <u>ՈՒղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայությունների ձեռքբերում</u>

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն ուղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայությունների ձեռք բերման ծախսերը պետք է իրականացվեն «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:***

Ոստիկանության զորքերի 2024 թվականի կարիքների համար ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության /վարորդի հետ միասին/ ծառայության հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է, որ գնման առարկան հանդիսանում է տրանսպորտային միջոցների վարձակալության ծառայությունների ձեռքբերումը, որի շրջանակում իրականացվելու է տրանսպորտային ծառայությունների մատուցում ՀՀ ամբողջ տարածքով:

Ոստիկանության զորքերի կողմից 2024 թվականի վեց ամիսների ընթացքում ձեռք է բերվել ուղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայություններ, որոնց ծախսերը կատարվել են «421600 Գույքի և սարքավորումների

վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 68,680.00 հազ.դրամ:

***Նախարարության բացատրությունը***

2024թ. ընթացքում «Ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալություն՝ վարորդի հետ միասին, ծառայությունների» ձեռքբերման համար իրականացված «ՀՀ ՆԳՆ ՈԶ ԳՀԾՁԲ-24/6/Բ/4/ԱԾ» ծածկագրով գնման ընթացակարգը, որի ծախսերը կատարվել են 421600՝ «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, հայտարարվել է դեռևս 2023թ. դեկտեմբերի 28-ին:

2024թ. ընթացքում իրականացված մյուս ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի ծախսերը կատարվել է «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Նախարարության բացատրությունն ընդունվել է ի գիտություն: Այդուհանդերձ հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է հաշվետու ժամանակահատվածի պետական բյուջեի կատարման հաշվետվության վերոնշյալ տնտեսագիտական դասակարգման հոդվածների խեղաթյուրմանը:

### 4.3.2. Ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայությունների դիմաց վճարում

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման 36-րդ կետով սահմանված պահանջի նկատմամբ՝ «Վճարման ժամանակացույցը հաստատվելուց հետո և միայն դրան համապատասխան ԲԱԿ-ն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով ստանձնելու ֆինանսական պարտավորություններ, որոնք պետք է ֆինանսավորվեն նախահաշվով նախատեսված միջոցների հաշվին»:***

Ոստիկանության զորքերի կողմից 2024 թվականի վեց ամիսների ընթացքում ձեռք է բերվել ուղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայություններ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն 2024 թվականի հունվարի 18-ին «Էլիտբաս» ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ «ՆԳՆ ՈԶ ԳՀԾՁԲ-24/6/Բ/4/ԱԾ» ծածկագրով գնման պայմանագիրը՝ 68,680.00 հազ.դրամով:

Ոստիկանության զորքերի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունվարի 18-ին կնքված պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների համար մատակարարի կողմից դուրս են գրվել 68,680.00 հազ.դրամի հարկային հաշիվներ: Հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 10,535.11 հազ.դրամի ծառայությունները մատուցվել են 2023 թվականի դեկտեմբերի 4-ից-17-ն ընկած ժամանակահատվածում: Փաստորեն առանց նախահաշվով նախատեսված հատկացումների և առանց սահմանված կարգով պայմանագիր կնքելու, Ոստիկանության զորքերի կողմից 2023 թվականի դեկտեմբեր ամսին ստանձնվել են ֆինանսական պարտավորություններ, որի վճարումներն իրականացվել են 2024 թվականի փետրվար ամսին՝ տվյալ տարվա համար հատկացված միջոցների հաշվին:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն: 2023 թվականի տարեվերջին նշված ծառայության ձեռքբերման համար «ԷԼԻՏԲԱՍ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված միջոցները ամբողջությամբ սպառված են եղել:

Նշված ժամանակահատվածում ՀՀ-ում ներքաղաքական վիճակը լարված է եղել, և «ԷԼԻՏԲԱՍ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի զինծառայողների տրանսպորտային սպասարկում՝ ըստ պահանջի: Քանի որ 2023թ. տարեվերջին հնարավոր չի եղել ճշգրտել մատուցած ծառայությունների ծավալը, հարկային հաշիվները դուրս են գրվել 2024 թ., որի վճարումներն իրականացվել են 2024 թվականի փետրվար ամսին՝ տվյալ տարվա համար հատկացված միջոցների հաշվին:

### 4.3.3. Հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության ծառայությունների ձեռքբերում

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված պահանջների նկատմամբ: Նշված հրամանի 16-րդ հավելվածով հաստատված «Դասակարգման կիրառման» կարգի համաձայն ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված է «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածը:***

Նախարարության 2024 թվականի կարիքների համար Երևանի հաշվառման-քննական բաժնի և Կոտայքի հաշվառման-քննական բաժնի՝ տրանսպորտային միջոցների գրանցման-հաշվառման և վարորդական վկայականների հատկացման գործընթացների ժամանակ հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության հիմունքներով ներդրում, շահագործում և սպասարկում ծառայությունների ձեռքբերման համար կազմակերպվել է թիվ «ՆԳՆ ԳՀԾՁԲ-2024ՀԵՐԹ/ՃՈ» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 15-ին «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼ» ՍՊԸ-ի հետ կնքվել է 4,900.00 հազ.դրամի թիվ «ՆԳՆ ԳՀԾՁԲ-2024ՀԵՐԹ/ՃՈ» ծածկագրով գնման պայմանագիրը:

Նախարարության կողմից հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության հիմունքներով ներդրում, շահագործում և սպասարկում ծառայությունների ծախսերը կատարվել են «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի փոխարեն: Նշված ծառայությունների մասով դրամարկղային ծախսը կազմել է 1,225.00 հազ.դրամ:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն:

### *4.4. «ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/L-35» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության իրավունքի սահմանափակումը*

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 121-րդ կետով սահմանված պահանջի նկատմամբ, համաձայն որի «Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման»:***

Երեք ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրվել է, որ Նախարարության կարիքների համար ընթացիկ շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված 2 գնման ընթացակարգերի ժամանակ գնահատող հանձնաժողովը չի ստուգել հաղթող ճանաչված մասնակցի՝ «Մուրադյան Շին 86» ՍՊԸ-ի ներկայացրած տվյալների իսկությունը և չի բացահայտել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված իրավաբանական անձի հետ փոխկապակցված անձ հանդիսանալու հանգամանքը, որով պայմանավորված «Մուրադյան Շին 86» ՍՊԸ-ն պետք է զրկվեր գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից:

Վեց ամիսների հաշվեքննության ընթացքում Նախարարության կողմից նոր ընթացիկ շինարարական աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված թիվ «ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Լ-35» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Մուրադյան Շին 86» ՍՊԸ-ն, որի հետ 2024 թվականի ապրիլի 30-ին կնքվել է 11,397.80 հազ.դրամի պայմանագիր:

***Նախարարության բացատրությունը***

Անհամապատասխանությունը շտկվել է: ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի 03.09.2024 թվական որոշմամբ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-Շին/2024/Լ-35 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Մուրադյան Շին 86» ՍՊ ընկերությանը ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /որոշումը կցվում է/:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Ընդունվել է ի գիտություն:

## *4.5. Պարեկային ծառայության փրանսպորփային միջոցների վառելիքի ծախսի հիմնավորվածությունը*

***Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի նկատմամբ՝ այն է՝ «Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների փեղի ունենալը»:***

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» թիվ 142-Ա հրամանի հավելվածի 7.7-րդ կետով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, այն է՝ մարդատար ավտոմեքենայի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի (այսուհետ՝ ավտոմեքենայի) վառելիքի (բենզին, դիզելային վառելիք, հեղուկ գազ) ծախսումը փաստաթղթավորվում է «Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկով»:***

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի և մարզային պարեկային ծառայությունների տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի վերաբերյալ սկզբնական հաշվառման փաստաթղթեր՝ երթուղային թերթիկներ չեն լրացվել՝ բացառությամբ պարեկային ծառայության ղեկավար կազմին ամրակցված 15 տրանսպորտային միջոցների: Ամսվա կտրվածքով վառելիքի ծախսը և կատարված վազքի տվյալները ներկայացվել են հաշվետվությամբ՝ ներառելով ծառայության տեսակը, ամսվա համար ստացված վառելիքի քանակը, պետ համարանիշը և ըստ աշխատանքային օրերի ընդհանուր թվի կատարված վազքը: Ըստ հաշվետվությունների, 2024 թվականի վեց ամիսների ընթացքում պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը կազմել է 919,561.87 հազ. դրամ, որից Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը՝ 201,182.11 հազ.դրամ, մարզային

պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը՝ 718,379.76 հազ.դրամ:

Այսպիսով, բենզինի ծախսը և ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների արժանահավատությունը հիմնավորող սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ երթուղային թերթիկները, պարեկային նշանակության ավտոտրանսպորտային միջոցների համար հաշվեքննությամբ ընդգրկվող ժամանակահատվածում չեն լրացվել (բացառությամբ Երևան քաղաքի պարեկային ծառայության ղեկավար կազմին ամրակցված 15 տրանսպորտային միջոցների):

Դրանով պայմանավորված վերոնշյալ հաշվետվություններում արտացոլված՝ ըստ աշխատանքային օրերի ընդհանուր թվի կատարված վազքի (կմ) ցուցանիշները հիմնավորված չեն երթուղային թերթիկներում՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և ավարտի դրությամբ պարտադիր լրացման ենթակա վազքի ցուցիչների (կմ) տվյալներով:

***Նախարարության բացատրությունը***

ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի կողմից տրվել է հանձնարարական պարեկային նշանակության ավտոտրանսպորտային միջոցների երթուղային թերթիկները սահմանված կարգով լրացնելու ուղղությամբ:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Ընդունվել է ի գիտություն:

### ***4.6. Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի ճանաչում***

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտով» սահմանված ծախսերի ճանաչման (ստանդարտի 2.47 և 2.48 կետեր) պահանջների նկատմամբ, համաձայն որի ֆինանսական հաշվետվությունում ծախսերը պետք է ճանաչվեն, երբ առաջացել է ապագա տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի նվազում՝ կապված ակտիվի նվազման կամ***

***պարտավորության աճի հետ, որը կարող է արժանահավատորեն չափվել: Չափումը այն դրամային գումարի որոշման գործընթացն է, որով փվյալ դեպքում ծախսերը ճանաչվում և գրանցվում են ֆինանսական հաշվետվություններում:***

Նախարարության տնտեսական վարչության վառելիքաքսայուղերի վեց ամիսների ծախսի հաշվետվությունների համաձայն, Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով ելքագրվել և ծախս է ճանաչվել 421,560 լիտր պրեմիում տեսակի բենզին: Նշված քանակի բենզինի ծախսը արտացոլվել է նաև Նախարարության պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվետվությունում: Սակայն, ըստ Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի հաշվետվությունների, 2024 թվականի վեց ամիսների վառելիքի ծախսը կազմել է 367,521 լիտր կամ ելքագրված և ծախս ճանաչված բենզինից 54,039 լիտրով պակաս /421,560-367,521/, որը հիմնավորվում է բենզինի նույն ժամանակաշրջանի շարժով և մնացորդներով:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն: ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի կողմից տրվել է հանձնարարական նշված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Ընդունվել է ի գիտություն:

### ***4.7. Բենզինի ձեռք բերման պայմանագրերի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ստանդարտով սահմանված տեխնիկական պայմաններին***

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ ԳՕՍՏ-32513-2023-ի «Շարժիչային վառելիք. Բենզին ոչ էթիլացված» /այսուհետ ԳՕՍՏ/ տեխնիկական պայմանների նկատմամբ: «ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ- /2023/Հ-80», «ՆԳՆ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-24/1/Բ/3/ՎՔՆ-1», «ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՄ-2024/Ա-15-1» և «ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՄ-2024/Ա-14-1» ծածկագրերով պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանված բենզինի ֆիզիկաքիմիական ցուցանիշները չեն համապատասխանում վերոնշյալ ստանդարտով***

***սահմանված պայմաններին:*** Նախարարության 2024 թվականի կարիքների համար վառելիքի գնման պայմանագրերը ներկայացված են ստորև աղյուսակում.

**Նախարարության 2024 թվականի կարիքների համար բենզինի գնման պայմանագրեր**

Աղյուսակ 2, /հազ. դրամ/

| Հ/Հ | Գնման ծածկագիր | Մատակարար կազմակերպություն | Պայմանագրի կնքման ամսաթիվը | Վառելիքի տեսակ | Քանակ | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-/2023/Հ-80» | «Սի Փի ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 20.12.2023թ | ռեգուլյար (Աի-92-K5) | 230,072 | 114,920.96 |
| | | | | Դիզելային վառելիք K5 | 251,000 | 130,419.60 |
| 2 | «ՆԳՆ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-24/1/Բ/3/ՎՔՆ-1» | «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ | 29.01.2024 | ռեգուլյար (Աի-92-K5) | 123,910 | 64,400.00 |
| 3 | «ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-բենզին/2024/Հ-3» | «Սի Փի ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 06.02.2024թ | Դիզելային վառելիք K5 | 154,271 | 73,895.80 |
| 4 | «ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՄ-2024/Ա-15-1» | «Ֆլեշ» ՍՊԸ | 22.02.2024թ | ռեգուլյար (Աի-92-K5) | 5,153,916 | 2,372,605.23 |
| 5 | «ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՄ-2024/Ա-14-1» | «Սի Փի ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 16.02.2024թ | պրեմիում (Աի-95-K5) | 1,400,000 | 685,999.99 |
| 6 | «ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏՄ-2024/Ա-14-1» | «Սի Փի ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 16.02.2024թ | ռեգուլյար (Աի-92-K5) | 100,000 | 44,100.00 |

Հաշվեքննությամբ պարզվել է, որ վառելիքի գնման պայմանագրերի տեխնիկական բնութագրերով ռեգուլյար (Աի-92-K5) տեսակի բենզինի համար սահմանված մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանում ինչպես միջազգային, այնպես էլ ԳՕՍՏ-ի տեխնիկական պայմաններին:

Մասնավորապես, պայմանագրերով ռեգուլյար (Աի-92-K5) տեսակի վառելիքի համար սահմանված է, որ օկտանային թիվը պետք է պակաս չլինի 91-ից, սակայն ըստ

ԳՕՍՏ-ի այն չի կարող պակաս լինել 92-ից, շարժիչային մեթոդով օկտանային թիվը պետք է պակաս չլինի 81-ից, սակայն ըստ ԳՕՍՏ-ի այն չի կարող պակաս լինել 83-ից, վառելիքի խտությունը 15° C դեպքում պետք է գտնվի 720-775 կգ/մ³ միջակայքում, սակայն ըստ ԳՕՍՏ-ի խտության թույլատրելի միջակայքն է 725-780 կգ/մ³: Պայմանագրով վառելիքում մեթանոլի պարունակությունը չպետք է գերազանցի 3%-ը, որը չի համապատասխանում ԳՕՍՏ-ի, ինչպես նաև Մաքսային միության երկրների համար գործող ՏՐ ՏՍ 013/2011 «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինի դիզելային և նավային վառելիքի ռեակտիվ շարժիչների վառելիքի ու մազութի պահանջների մասին» տեխնիկական կանոնակարգի հավելված 2-ով սահմանված՝ առավելագույնը 1% ցուցանիշին:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն: Այսուհետև գնման գործընթացները կկազմակերպվեն՝ հիմք ընդունելով ԳՕՍՏ-32513-2023 ստանդարտները:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Ընդունվել է ի գիտություն:

### *4.8. Նախարարության գնման պայմանագրերի կատարման փաստաթղթերի հրապարակումը*

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման № 1 հավելվածի 110-րդ կետով սահմանված պահանջների նկատմամբ, համաձայն որի «....էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝ 1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.....»:***

Նշված անհամապատասխանությունը արձանագրվել է նաև նախորդ հաշվեքննության շրջանակներում: Նախարարության կողմից անհամապատասխանությունը ամբողջությամբ չի վերացվել, այսինքն՝ կնքված պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները և հարկային հաշիվները ամբողջությամբ հրապարակված չեն գնումների էլեկտրոնային armeps.am-ում համակարգում:

***Նախարարության բացատրությունը***

Ընդունվել է ի գիտություն: Աշխատանքներ են տարվում հանձնման-ընդունման արձանագրությունները և հարկային հաշիվները էլեկտրոնային armeps.am-ում համակարգում հրապարակելու ուղղությամբ:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Ընդունվել է ի գիտություն:

### *4.9. Ներքին աուդիտի համակարգի ապահովումը*

***Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների նկատմամբ՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձանցից ընտրության միջոցով:***

Նախարարության համակարգում գործող ներքին աուդիտի վարչությունը 2020 թվականի հունվարի 1-ից չի գործել: Նախարարությունում աուդիտ իրականացնելու համար կազմակերպվել է գնման գործընթաց և 2024 թվականի հունվարի 30-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն «Քրոու ընդ Ասատրյան» ՍՊԸ-ի հետ կնքվել է 79,500.00 հազ դրամի պայմանագիր: Ֆինանսական միջոցների հատկացման համար շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության № 01/34-1/12415-2024 գրությամբ Նախարարությանը հայտնել են, որ «Հաշվի առնելով հարկաբյուջետային խիստ սահմանափակ հնարավորությունները, անհրաժեշտ է սահմանել հստակ ծախսային առաջնահերթություններ բյուջետային (այդ թվում՝ տնտեսումների հաշվին իրականացվող)

ծախսերի նկատմամբ և տեղեկացվել է, որ նախագիծը ներառվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացումների և վերաբաշխումների վերաբերյալ առաջարկների շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայանալիք քննարկման հարցերի ցանկում»:

Այսպիսով, Նախարարությունում 2024 թվականի առաջին կիսամյակի ավարտի դրությամբ ներքին աուդիտի գործառույթ չի իրականացվել:

***Նախարարության բացատրությունը***

ՀՀ ՆԳ նախարարության կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել համակարգում իրականացնել մեկանգամյա ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերում, որի նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն «Քրոու ընդ Ասատրյան» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ 79,500.0 հազ դրամ պայմանագրային գնով: Ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված՝ նշված ձեռքբերումը չի իրականացվել:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Ներքին աուդիտն իրականացվում է կամ կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման, կամ հրավիրված կազմակերպության միջոցով: Հետևաբար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված աուդիտի իրականացումը պարտադիր պայման է կատարման համար:

## V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ

❖ *Խեղաթյուրումներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա*

### *5.1. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման շրջանակներում «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր*

Առկա է խեղաթյուրում «463900 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «463700 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի մասով՝ 1,170,000.00 հազ. դրամ գումարի չափով:

Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, Նախարարության արձագանքը, ներկայացված է սույն եզրակացության **IV բաժնի** 4.1.**-րդ կետում:**

### *5.2. 1234-11001 «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» միջոցառման շրջանակներում «423200 Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսեր*

Առկա է խեղաթյուրում «423200 Համակարգչային ծառայություններ» և «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի մասով՝ 9,838.50 հազ.դրամ գումարի չափով:

Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, Նախարարության արձագանքը, ներկայացված է սույն եզրակացության ***IV բաժնի 4.2.-րդ կետում:***

### *5.3. ՈՒղևորափոխադրող ավտոմեքենաների (վարորդի հետ միասին) վարձակալության ծառայությունների ձեռքբերում*

Առկա է խեղաթյուրում «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» և «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի մասով՝ 68,680.00 հազ.դրամ գումարի չափով:

Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, Նախարարության արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը ներկայացված է սույն եզրակացության **IV բաժնի 4.3.1.-րդ կետում:**

### *5.4. Հերթերի ավտոմատ կառավարման համակարգի վարձակալության ծառայությունների ձեռքբերում*

Առկա է խեղաթյուրում «421600 Գույքի և սարքավորումների վարձակալություն» և «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածներով կատարված ծախսերի մասով՝ 1,225.00 հազ.դրամ գումարի չափով:

Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, Նախարարության արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը ներկայացված է սույն եզրակացության **IV բաժնի *4.3.3.-րդ կետում:***

- *Խեղաթյուրումներ, որոնք չունեն ազդեցություն Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա*

### *5.5. Երևան քաղաքի պարեկային ծառայության տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի ճանաչում*

Առկա է խեղաթյուրում «426400 Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով կատարված ծախսերի մասով՝ 26,478.57 հազ. դրամ /54,039x489.99/ գումարի չափով:

Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, Նախարարության արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը ներկայացված է սույն եզրակացության ***IV բաժնի 4.6-րդ կետում:***

## VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով ընթացիկ հաշվեքննության արդյունքներից և նկատի ունենալով «Նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ միջոցառումների ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում, ըստ պատասխանատու ստորաբաժանումների, իրականացվող աշխատանքները, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանն առաջարկվում է.

1. Ապահովել Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը,

2. Հետևողականություն ցուցաբերել Ծրագրով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում իրագործելու ուղղությամբ:

**Գեղամ Հովեյան**
**Հաշվեքննիչ պալատի անդամ**

Digitally signed by
HOVEYAN GEGHAM 11037
Date: 2024-11-08 14:38:14

31 Հոկտեմբերի 2024 թվական

***Հաշվեքննիչ պալատ***
*Բաղրամյան փող. 19, ք. Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*